

ՏԱՍՆ ԵՒ ԶՈՐՐՈՐԻ ՏԱՐԻ



Տարեկան զինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мая».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ երեւոյն: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիա: Նամակ ֆրանսիայից: Արտաքին լուրեր:—ԽԱՆՆԻ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՊՈՒՆԵՐ:—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ՏԵՂԵԿԱՅՈՅՑ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԵՑ

Մարտի 3-ին

Խաւքանչիւր հասարակական հիմնարկութիւնը չափազանց ծանր դրութեան մէջ կը գրկւէր, եթէ նրա պաշտօնակատարները տարված լինէին պատասխանել ամեն մի յօդուածի, որը երևան է գալիս մամուլի մէջ յօդուած և ընդդէմ նրա գործունէութեան: Այդպիսի պահանջմանց կատարելը հեշտութեամբ կարող է միտ հետեանք ունենալ հասարակական կառավարութեանը հաւատարմութեանը: Երբեք կանոնաւոր ընթացքի վրա, որովհետեւ մտցնելով ծառայողներին լրացրական անպատու վիճարանութեան մէջ, անշուշտ կը չեղէ նրանց իրանց իսկական պարտաւորութիւնները կատարելու: Բայց երբ դուրս է գալիս հանդէս այնպիսի մի անձն, որ յնդիմաց հինգ տարվայ քաղաքի անտեսական վարչութեան ղեկավար է եղած և անմիջապէս ծանօթ է այդ բարդ մեքենայի բոլոր մանրամասնութեանը հետ և մի և նոյն ժամանակ հանդէս է դուրս գալիս փաստերը ծռող անվայել դերով, այնուհետեւ լռելը այլ ևս անտեղի կը լինի:

Ներկայ դէպքում ես տարված եմ պատասխանել երևանի նախկին քաղաքագլուխ պ. Յովհաննէս Ղորղանեանի նամակին, որ ղեկավար է «Մշակ» լրագրին № 20: Պատասխանելը ես անհրաժեշտ պարտականութիւն եմ համարում ինձ համար, մանաւանդ այն պատճառով, որ նրա հաղորդած և ճիշտ անտեսանելի լինողներին մէջ, որոնց ընթերցող հասարակութիւնը իրաւունք ունի կատարել հաւատ ընծայել, մտել են խոշոր սխալներ, որոնք բոլորովին չեն համապատասխանում երևանի քաղաքային վարչութեան գործերի մէջ գտնված գրաւոր ասպնդուցութիւններին:

Պ. Ղորղանեանը հաստատում է. ա) թէ պարտքերի ամբողջ դրամարը, որ քաղաքային խորհրդարանի հին ներկայացուցիչները կտակել են նորերին, աւելի չէ, քան 32,900 ռուբլ. բ) թէ 20,000 ռուբլուց, որ պարտք էր արած 1879 թվականին տեղական քաղաքացիները քաղաքային հասարակական կառավարութիւնը բանալու համար, հին ներկայացուցիչները քաղաքային վարչութեան վրէժարել են պարտաւորելին աւելի քան 6,000 ռուբլ. գ) թէ քաղաքի պարտքերով ծանրաբեռնվելը ծագել է նրա անտեսական նախկին խնամատարներից անկախ հանգամանքներից և թէ այս ակտը երկուսի պատճառը հարկաւոր է որոնել սովի մէջ, որ այնքան մեր երկրը 1879 թվականի վերջում և որի հետ պատերազմելու համար քաղաքային ինքնավարութիւնը, բացի վաճառքներից հինգ հազար ռուբլ պարտք վերանշնչելուց, ժողովրդի ամենատաքաւ դասին բաժանելու համար, ստիպված գտնվել ստանալ փոխադարձ արքունական շտեմարանից ցորեան արժողութեամբ 12,000 ռուբլ. դ) թէ յիշեալ 12 հազար ռուբլին կարելի չէր զուտ վերադարձնել դանձարանին, որովհետեւ ցորենի վաճառքուց ձեռք բերած դրամաց 10,400 ռուբլ գործարկվել է Արտաքին ջրանցքի վերանորոգութեան վրա և ե) թէ այժմ անսխալ քաղաքային խորհրդարանի ներկայացուցիչները չը կարողացան օգուտ ընդել նրա հին ներկայացուցիչների գովելի աշխատանքը պտուղներից յիշեալ ջրանցքի վերաբերմամբ, որովհետեւ քաղաքի վարչապետը, որոնցից ստացվում էր մինչև այդ ջրանցքի նորոգելը 5,000—7,000 ռուբլական եկամուտ, այժմ, չը նայելով Արտաքին ջրանցքի յորդաւատ ջրին, փոխանակ

25,000—35,000 ռ., չնորսիւ քաղաքային խորհրդարանի նոր ներկայացուցիչներին, բերում են 3,300 ռ.

Ահաւասիկ այն ամենայն փաստերը, որոնց օգնութեամբ քաղաքային վարչութեան նախկին ղեկավարը հանդէս է դուրս գալիս «Մշակ» լրագրի էջերի մէջ նոյն լրագրի թղթի վրայ № 6 տպված տեղեկութիւնները ստեղծ համար:

Կաշխատեմ և ես, իմ թոյլ կարողութեան չափ, պաշտօնական տեղեկութիւնների օգնութեամբ հովանդակ ապագայում իմ մեծապատիւ նախորդի մէջ մամուլի հաւատը ի չար գործ դնելու և մոլորեցնելու ընթերցող դասին երեւակայական լինող շանքերի միջոցով:

Մինչև 1-ն սեպտեմբերի 1884 ամի, այն է, երբ ես ընդունեցի քաղաքագլուխ պաշտօնը, քաղաքը ունէր հետեւեալ պարտքերը.

ա) 15,506 ռ. 50 կ. մնացած անվճար քաղաքային ինքնավարութիւնը բանալու համար 1879 թվականին պարտք արած 20 հազար ռուբլուց:

բ) 1,062 ռ. յիշեալ պարտքերի տոկոսն մինչև 16 մարտի 1884 ամի:

գ) 12,500 ռ. պարտք արած Կովկասեան փոխարքայի նախկին գլխավոր կառավարութեան դուրսից, որ այդ դրամով գնվել և յանձնվել արքունական շտեմարանին մի հազար չեռլիքտ փոխտաքած ալիւրը:

դ) 5,000 ռ., որ պարտք էր արած դանձարանից 1880 թվականին քաղաքի աղքատ բնակչաց բաժանելու համար և

ե) 17,116 ռ. գանձադան տեսակ անդիտաճիւղի ծախսեր, որոնք մնացել էին անվճար անցնալ տարիների հաշիւներից:

Սրանից երևում է, թէ քաղաքի պարտքերի ընդհանուր գումարը, որ մնացել էր ի ժամանակ վարչութեան քաղաքի հին ներկայացուցիչներից նորերին, կազմում է ոչ թէ 32,900 ռ., ինչպէս հաւատացնում է հասարակութեանը պ. Ղորղանեանը, այլ 51,184 ռուբլ 50 կոպ. (Տես քաղաքային ծախուց նախահաշիւը 1885 ամի և վարչութեան մտից և ծախուց տուժարը 1884 ամի):

Ի հաշիւ յիշեալ 20 հազար ռուբլ պարտքերի քաղաքային վարչութեան նախկին պաշտօնակատարները վճարել են պարտաւորելին մայր գումարից 4,493 ռ. 50 կ., իսկ եթէ այդ գումարից դուրս հանենք 1,062 ռ. չը վճարած տոկոսը, այն ժամանակ կերպը, որ վարչութեան շնորհիւ վրէժարված է յիշեալ պարտքից ոչ թէ աւելի քան 6,000 ռ., ինչպէս այդ վկայում է վարչութեան նախկին նախագահը, այլ միայն 3431 ռուբլ 50 կ. (Տես վարչութեան օրագրերը 19-ն մարտի 1883 ամի և 17 յունիսի 1884 ամի, այդ վերջին թվականի ծախուց և մտից տուժարի 13-դ յօդուածը և ծախուց նախահաշիւը 1884 ամի):

Հացի թանգութեան ծանր տարին անգլիաբար խլելով երևանի նախնայի բնակիչներին մեծամասնութեան անտեսական բարօրութիւնը, ոչ թէ աղքատացրել, այլ ընդհակառակը հարստացրել քաղաքային արկղը, աւելացնելով նրա եկամուտի աղբիւրը 15,715 ռ. 13 կ. դուժարով, որից առանց մի որ և է վնասի քաղաքի շահերին հնչողութեամբ կարելի էր վճարել դանձարանի պարտքը 12,500 ռ., որ ստացված էր արքունական շտեմարանին հասանելի ալիւրը գնելու համար: (Տես հացի մասնաժողովին հաշիւը, որ առաջարկված է վարչութեանը ի 13 հոկտեմբերի 1880 ամի, № 48):

Միևի բաւականաչափ պարզ չէ, որ քաղաքի պարտքի աճման վրա սովը ոչինչ ազդեցութիւն չէ ունեցել, այլ թէ այս վշտալի դիպուածի պատճառը եղել է մի այլ ոչ պակաս դարձուրելի պատուհաս:

Հարունակելով իր փաստերը պ. Ղորղանեանը հաւատացնում է թէ հացի վաճառքուց դոյացած գումարից գործ է դրված Արտաքին ջրանցքի վրա 10,400 ռ.: Մեծ աշխատութիւն չէ հարկաւոր և այս թիւը հերքելու, որովհետեւ թէ և ամբողջ կապալադրամը արդար 10,400 ռ. էր, սակայն այս վերջին գումարից վճարած է կապալառուին յիշեալ աղբիւրից 7,000 ռ., իսկ քաղա

քի արկղից 1,600 ռ., ընդամենը 8,600 ռուբլ (Տես քաղաքային վարչութեան գործը № 78, 1879 ամի և նոյն վարչութեան տուժարը 1879—1880 ամաց, որի մէջ գրված է հացավաճառներից ստացած դրամները):

Դառնալով վերջապէս դէպի հաշիւաւոր աշխատութիւնները Արտաքին ջրանցքի վերաբերեալ, դէպի այն երեւելի գործը, որին վիճակված է դեռ շատ երկար ժամանակ զմայլեցնել մեր խաղաղ քաղաքացիներին և որը նշանաւոր տեղ կը բռնէ երևանի քաղաքային վարչութեան հին խմբի գործունէութեան մէջ:

Արտաքին ջրանցքի վերանորոգութեան հարցը վաղուց արդէն, դեռ քաղաքային ինքնավարութիւնը մտցնելուց առաջ, գրաւել էր հասանգհան կառավարութեան ուշադրութիւնը քաղաքի հողերի եկամուտը աւելացնելու նպատակով: Յանդիւարով իրագործել այդ օգտաւէտ դիտարկութիւնը, մեր ինքնավարութիւնը 10 յունիսի 1881 ամի, ստեղծ կապալով ջրանցքի նորոգութիւնը 10,400 ռուբլով, պարտաւորացնելով կապալառուին աւարտել այդ գործը մինչ ց-1-ն մայիսի 1882 ամի: Պայմանագրեալ ժամանակին ջրանցքի յանձնվելը և ընդունվելը չը կայացան, այնուհետեւ պայմանագրի կողմերի մէջ ծագվեցան վիճարանութիւններ, վերջ ի վերջոյ ճարտարապետների յանձնաժողովը, որ կազմված էր ջրանցքը նայելու և ընդունելու համար, իր արձանագրութեան մէջ ի 18-ն մայիսի 1883 ամի եկաւ այն եզրակացութեան, թէ կապալառուին մինչև այն ժամանակ կատարել է միայն 2,547 ռ. 56 կոպէկի գործ, իսկ քաղաքային վարչութիւնը, որ առաջնից առաջ ձեռքով վճարել էր կապալառուին առանց մանրամասն ընկնելու նրա կատարած չինութիւնը 8,600 ռ., գտաւ միակ ելք, այն է բանալ վէճ կապալառուի դէմ տուգանաց (неустойка) մասին, բայց առաջ, սորանում են անյաւորութիւնը դուռ: (Տես քաղաքային վարչութեան գործը № 54, 1876 ամի):

Այսպէս վերջացան Արտաքին ջրանցքը չեղողների եզրկտական աշխատութիւնները, այն ջրանցքը, որ մինչև հիմա էլ գտնվում է նոյն տիպի դրութեան մէջ, որի մէջ կար և գործը սկսելուց առաջ: Այս բոլոր եղելութիւնները լաւ յայտնի են պ. Ղորղանեանին, որը անմիջապէս այդ գործերին ձեռնամուխ է եղած, իսկ եթէ յիշեալ փաստերը նրան բաւականաչափ չեն համարում, որ Արտաքին ջրանցքը նրա նկարագրած վերաբերեալ պարտքերով, ոչ այլ ինչ է, եթէ ոչ բերկրացուցիչ պատմական տեսիլ միայն, և եթէ ընդհակառակն նա շարունակում է զմայլել վարչութեան աշխատութիւններով, ապա ինչն էր նրան արգելում 1883—1884 թվականներում ստանալ քաղաքի վարչապետի պաշտօնում նա նախատում է քաղաքային խորհրդարանի այժմեան ներկայացուցիչներին: Ուրեմն եթէ կանգնեք այն մտքի վրա թէ վարչութեան նախկին գործողների հակայական ձեռնարկութիւնը ամենին չը փոխեց քաղաքի դաշտերի ջրերու պայմանները, կը մնայ միայն համեմատել այդ հողերից ստացած եկամուտի թուանշանները քաղաքային խորհրդարանի նախկին և այժմեան ներկայացուցիչների ժամանակ:

Քաղաքին պատկանեալ վարչապետից և եւսն ջրանցքից ստացվել են: 1880 թվականին 4,800 ռ., 1881 թ. ոչինչ, 1882 թ. —6,982 ռ., 1883 թ. —6,141 ռ. և 1884 թ. —3,198 ռ., ընդամենը 21,121 ռ.: Դուրս հանելով այս գումարից 1,541 ռ., որոնք ծախս են եղած քաղաքային արկղից 1882—1883 թվականներում, (բացի քաղաքացիներից ժողոված դրամները) ջրի հողերից և առուներից վրա, որոնք գտնվում էին այն տարիներից, կը յայտնվի, թէ յնդիմաց հինգ տարիներից, այն է վարչութեան նախկին գործիչների ժամանակ, յիշեալ հողերից մտել է քաղաքային արկղը ընդամենը 10,580 ռ., ուրեմն մինչև թուով իւրաքանչիւր տարի ստացվում էր ոչ թէ 5,000—

7,000 ռ., ինչպէս հաւատացնում է պ. Ղորղանեանը, այլ 3,916 ռ. (Տես հաշիւները քաղաքային վարչութեան 1880—1883 թվերի և մտից ու ծախուց տուժարները 1883—1884 թ.):

Իսկ այժմ, երբ հացի գինը գրեթէ երեք անգամ պակաս է 1880—1884 թ. գներին, մի և նոյն հողերից ստացվում է իւրաքանչիւր տարի ոչ թէ 3,300 ռ., ինչպէս վկայում է հասարակութեան նախկին ներկայացուցիչը, այլ 4,895 ռ. և այդ եկամուտը ապահովված է հինգ տարի ժամանակով: (Տես քաղաքի եկամուտի նախահաշիւը 1886 ամի):

Արդե՞ք բաւականաչափ պարզ չէ, թէ քաղաքի վարչապետից եկամուտ ձեռք բերելու գործում քաղաքային խորհրդարանի այժմեան ներկայացուցիչները ոչ թէ մնաց են հասցրել քաղաքի շահերին, այլ ընդհակառակն աւելացրել են նրա սպառված արկղի միջոցները:

Վերջացնելով ընդհատութիւնս այն անհրեւելի, ըստ կարծեաց պ. Ղորղանեանի, փաստերի, որոնք նրա ինքնապաշտպանութեան հիմքն են կազմում, ինձ մնում է միայն դարմանալ, թէ ինչպէս այս հասարակական վերաբերեալ գործիչը կարողացել է մոռանալ այսպիսի կարճ միջոցով իսկական չափը այն վշտալի հետեանաց մօտ օրերի, որոնք հիմքից խախտել են քաղաքային տնտեսութիւնը: Ո՛չ պակաս դարմանալ է և այն, որ վստահանալով դիմել մամուլին, նա չէ հողացել ժողովել քաղաքային վարչութեան գործերից հարկաւոր տեղեկութիւնները, որում նա, անկարծիք, արգելի. չէր հանդիպի, նոյնօրինակ, որպէս և չեն մերժիլ ինդիւրներն այն անձանց, որոնք կը ցանկանան ստուգել վկայաթղթերի միջոցով իմ ցոյց տուած թուանշանները:

Իսկ ինչ կը վերաբերի պ. Ղորղանեանի յօդուածի միւս բաւականաչափ սրամիտ տողերին՝ պատասխանելը ես անտեղի եմ համարում:

Վերջացնելով խօսքերս, պարտաւորութիւն եմ համարում աւելացնել միայն, որ եթէ իմ մեծարգոյ նախորդին հաճոյ կը լինի այսուհետեւ ես բանակցել ինձ հետ քաղաքի վերաբերեալ գործերի մասին, ես պարտաւոր եմ մի քանի ժամ ես նուիրել երևան հանելու վարչութեան արխիւի խորքերից աւելի մեծ արժէք ունեցող վկայաթղթեր, որոնք ճարտար կերպով խօսում են յօդուած փայլուն ծառայութեան, որ արել են մայրենի քաղաքի շահերին նրա վարչութեան նախկին գործիչները:

Քաղաքագլուխ վասիլ Գեղամեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻՅԻՑ մեզ գրում են: «Անցեալ տարվայ դեկտեմբերի 30-ին, ընդհանուր բժշկական ժողովի նիստում (засѣданіе сѣзда врачей) պրոֆէսոր Ա. Շլիման կարգաց հետեւալ ղեկուցումը. «Личистая сила человека, какъ медицинскій дѣятель». Դա հետաքրքիր և բժշկականութեան մէջ բոլորովին նոր հետազոտութիւն է:

Մեզ ուղարկված է ՍԱՐԿՈՎԻՅՑ հետեւալ նամակը: «Սրտի ցաւով կարգացնել ձեր լրագրում, որ խորէն վարդապետ Ստեփանէս պէտք է ուղարկվի Հաղբաւի վանք: Նրա նման ուսումնական հոգեւորականներ մենք գրեթէ չունենք: Նա յայտնի է, որպէս եւսանդուտ և ընդունալ գործիչ: Նրա թշնամիները ցոյց են տալիս նրա մեծ պակասութեան և դիւրագրգիւ լինելու վրա: Բայց զգայուն և անկախ մարդ, որ տեսնում է իր ժամանակակից հասարակութեան խոշոր պակասութիւնները, չէ կարող դիւրագրգիւ, կլքում չը լինել: Եթէ խորէն վարդապետը դիւրագրգիւ է, այդ ցոյց է տալիս միայն նրա հոգու անուշութիւնը, որովհետեւ նա չէ կարող անտարբեր աչքով նայել իր յորս կողմ յայտնվող ղեղձումների վրա: Ոչ թէ

միայն հայ, բայց և այլադասան հասարակութեան կողմից նա վայելում էր յարգանք և ինքն այժմ նա պատմութեան, այդ կարելի է միմիայն բացատրել նրա-նով, որ հայր սուրբը դարձել է չարախօսութեան դոհոյ:

Մեր ուսումնարաններում կրօնի դաստառութիւնը սովորաբար յանձն են առնում տեղական քահանաները, որոնց գիտութիւնը և նախապատրաստութիւնը սովորաբար կասկածելի է լինում: Գիւղական ուսումնարաններում դիւղական քահանաները չեն կարող կրօնի դաստառութիւնը յանձն առնել, նախ՝ այն պատճառով, որ բոլորովին անկարող են, երկրորդ՝ նոցա անձնական և պաշտօնական պարագայները թող չեն տալիս: Քաղաքների ուսումնարաններում նշանակվում է այս կամ այն քահանայ, և այդտեղ գլխավոր հիմքը այն է, որ կրօնի դաստառն պէտք չէ հանաք լինի, միւս պարագայները երկրորդական են... Աշխարհական ուսուցիչն յանձնել կրօնի դաստառութիւնը մեր ուսումնարաններում համարվում է, եթէ աւելի չափեր, անկարգաւոր չի հանգամանքներից դրդված, ուսուցչական անհատական համար, Պետերբուրգում լուսաւորութեան միջնորդութեամբ մէջ կազմված է մի յանձնաժողով, որը պիտի մշակէ մի ծրագիր, կրօնի դաստառութիւնը յանձնելու ուսուցչներին, և ուսուցչական անհատականներին մասնակցելու: Կրօնի դաստառութիւնը, որպէս զի կարելի լինի ունենալ ստորադասութեան ուսուցչներ կրօնի համար: Այդ յանձնաժողովը չուտով կը վերջացնէ իր ծրագիրը պատրաստութիւնը, և կրօնի դաստառութիւնը ուսուցչական անհատականներում նոր հիմքերի վրա կը դնուի: Հայոց ուսումնարանները մէջ աւանդող կրօնը, իր ներկայ ընկած դրութիւնով հանկուտ և ցանկալի ուղղութիւնը տալով համար, հարկաւոր է որ այդ աւանդալի դաստառութիւնը յանձնվէր պատրաստված վարժապետներին, որպէս զի կրօնը չը լինի որդական պատմութեան չոր ու ցամաք պատմութիւններ, և վերացական բացատրութիւններ մի անմարս ժողովածու: Ինչպէս որ նա է այժմ մեր կրօնուսուցչ քահանաների դաստառութեան ժամանակ ընդհանրապէս:

Գ.Ա.ՆԱԽԱՅԻՑ հաստատ աղբիւրներից լսվում է, որ մօտ ժամանակներում, Կիւ-Յիմիւի մի զինեղաբորթեան ընկերութիւն, որ կազմված կը լինի ակցիաներից: Հիմնվելու ընկերութեան պրօէկտը արդէն կազմված լինելով, ամսիս 2-ին պ. Տ. Ներսիսեանի ամբողջ ժողով կայացաւ, ուր մանրամասն կարգաւորվող որոշվեցաւ չլուծուի մի խումբ հիմնադիրների ստորագրութեամբ առաջարկել ի հաստատութիւն ֆինանսական միջնորդութեան: Բնկերութեան նպատակը կը լինի տեղական զինիները մշակել և արտահանել Ռուսաստան և ուրիշ երկրներ: Մանրամասնութիւնները մեր թղթակիցը խոստանում է մեզ յայտնել: Յաջողութեան ենթ ցանկանում:

Մարտի 9-ին չիս պարսիկները տօնում էին իրանց նոր տարի—բայամը: Թիֆլիսում բնակվող պարսիկները այդ օրը նուազարաններով, և զանազան հանդիսաւոր պատրաստութիւններով հաւաքվեցան պարսից հիւպատոսի տան առաջ: Այդտեղ նուազեցին պարսկական մարդը: Հիւպատոսարանը առաջնորդեց բոլոր հաւաքվածներին պարսկական շարքով: Պարսիկների ներկայացուցիչները զինվեցին հիւպատոսին զանազան ճաւերով և արեւելեան ձեռքով յայտնեցին իրանց յարգանքը և շնորհաւորութիւնները: Այդ ընթացքում պատմական նկիւնը պարսկական լինելու պատճառով չէր կարող չորսը հարգել: Այս ամբողջ տոնում է երեք օր:

Մեր նկարիչ Գէորգ Բաշինջաղեանի վրձինը նորից ընծայել է հասարակութեանը մի նոր սրտակերպ, որ Եվրոպայի ձիւնապատ տարիքի մինչև Վոնդերլիստաւ ամբողջ տարի հրաշալի տեսարանն է: Այդ սարը գտնվում է Բերնի կանտոնի բարձրաւանդակ մասում (Bernér-Oberland): Նրա տեսարանը սքանչելի է մանաւանդ Նոնէրլանդի գիւղից: Միտերլից, որտեղից վերցրել է տեսարանը և բնապատկերը, այսինքն բլուրից, Վոնդերլիստաւ տարի ձիւնապատ դադարել այնքան բարձր և հանդիսաւոր չէ երևում, որքան ներքինը, Նոնէրլանդից: Բնկերութեանը, այսինքն Թաւնի և Բերնից լճակների մակերևոյթից: Վոնդերլիստաւ նշանակում է Վոյտա և կարծում են որ այդ անունը տուած է քարին, որովհետեւ նա իր բարձրու-

թեամբ և զագաթի սրածայր լինելով կատարելապէս անմատչելի է համարվածներին և դեռ ոչ մի մարկանցուկ տաքը երբեք չէ կտնել նրա կուռական ձիւնի վրա: Պ. Բաշինջաղեան նկարել է այդ պատկերը ընտելիւնից, մի երկու տարի առաջ ճանապարհորդած լինելով Եվրոպայում:

Ստացանք Կ. Պոլսից հետեւեալ նամակը: «Պետիւն ունեւմ ուղարկելու ձեռք Ն. Տաղաւարեանի, ինքնին քաղաքում աշխատութեամբ հետդնեւմ հրատարակող «Բնական պատմութիւն» անունով գործի լոյս տեսած 7 ֆորմաները: Նոնորում ենք որ ձեր թերթի մէջ այդ աշխատանքի մասին մի քանի խօսք ասելով, ծանօթացնէք ուսանալոյց նրա հետ: Այդ գործը պիտի բաղկանայ չորս հատորներից, իւրաքանչիւր հատորը 25 տխածալ ֆորմաներից, 250 ընտիր պատկերներով և գիտնական մի ձեռն բառարանով, որ կը լինի հայերէնից—ֆրանսերէն և ռուսերէն: Այդ մասին մանրամասն յայտարարութիւնը կարող էք գտնել ձեռք ուղարկած Ն. Տաղաւարեանի խմբագրութեամբ լոյս տեսած «Գիտնական շարժում» անունով թերթի 69—70 երեսում «Բնական պատմութիւն» վերնագրի տակ: Յոյս ունենք որ կամենալով քաջալերել և նպաստել այդ բազմաւաստ գործին, յայտարարութիւնը կարտասալէք ձեր թերթի մէջ և կը հրատարակէք ուսանալոյց բաժանորդագրութեամբ օգնել հրատարակութեանը: Գործի ա. հատորը Ռուսաստանի համար բաժանորդագրութեամբ կարժեանայ 3 ռուբլի, իսկ ամբողջագրւելու լոյս տեսնելուց յետոյ, 4 ռուբլի:»

Ուղում էինք մի քանի խօսք ասել պ. Տէր-Ալեքսանդրեանի «Թիֆլիսից մտաւոր կեանքը» վերնագրով գրքի մասին: Գրքը հրատարակել է Հայոց գրքերի տպագրութեան Թիֆլիսի ընկերութիւնը և տողել է այդ 456 երեսից բաղկացած հաստ հատորը 8. Մարտի 1-ին տպարանում ներկայ 1886 թվին: Գրքի զինն է հասարակ թղթի վրա 1 ր. 50 կ., իսկ չքը թղթի վրա 2 ր. 50 կ.: Պէտք է խոստովանել որ դա մի շատ հետաքրքիր աշխատանք է: Հեղինակը հաւաքել է բոլորը, ինչ որ կարողացել է Թիֆլիսի հայերի բաւոյական և մտաւոր կեանքին վերաբերեալ, — ներանց աղօթքներ, երգեր, առածներ, ասացածներ, առակներ, օրհնութիւններ, անէճներ, երգումներ, յիշոյցներ, հեղաթիւներ, և այլն, մի խօսքով բոլորը, ինչ որ Թիֆլիսից հայերի բնակչութեան արտայայտիչ և նրանց յայտնաբերող է համարվել: Գրքը բաժանվում է հետեւեալ գլխաւոր մասերի. 1) Աղօթքներ, 2) երգեր, 3) առածներ և ասացածներ, 4) հանրակրթութիւնը, 6) անէճներ և յիշոյց, 7) երգումներ, 8) ապաւանքներ, 9) փառաքանք և խոյր, 10) ողբեր, և շնորհաւորութիւն, 11) ծաղր և համար, 12) կանոնաց սուր, 13) կենացներ, 14) փողոց-փողոց չըլող մանրակաճառների բաղադրանքներ, 15) զանազան երկրացոյց մասին անհայտներ և աւելի և հին անուններ ու աղբիւր, 16) երկնային թիֆլիսը, 17) ունի և դարձածներ, 18) հեղաթիւներ: Իր առաջարկով մէջ հեղինակը յիշում է այն բազմաթիւ անձանց աղբիւրները և նրանց գրութեանը, որ համարները, որոնց նա զինել է և որոնցից նա օգուտ է քաղել 26 տարւայ ընթացքում, իր մտադրված և այժմ դուրս բերած գործը մշակելու և հնարաւոր կատարելութեամբ հասցնելու համար: Շատ ուղիղ է որ այսպիսի ժողովածուներ մեծ նշանակութիւն ունեն, որովհետեւ ներկայացնում են ժողովրդի բարբառի հարստութիւնները: Պէտք է խոստովանել որ ամբողջ գրքից մենք ամենից շատ հաւանդելիք և դասվածք կարգացնէք «հեղաթիւներ» բաժինը: Բայց հետաւորութեամբ կարգացվելուց, նրանք շատ անգամ պարտական են իրանց մէջ դիտելիք և համակրելի գաղափար, և խոր միտք: Մի բան միայն կը նկատուի պ. Տէր-Ալեքսանդրեանի, ով որ ծանօթ է օտարալեզու և ռուս սոյնաման ժողովածուների հետ, որոնց մասնացոյց է անում և ինքն հեղինակը, երբեք չի հանդիպել նրանց մէջ այնպիսի ասացածներին, որոնք կատարելապէս անտեղի են տպագրական խօսքի համար: Բայց մեր հեղինակը, կամ հաւաքողը կարծել է թէ ամեն բան ինչ որ ժողովրդական է, նա իրաւունք ունի զետեղել այդ ժողովածուի մէջ: Ժողովրդի մէջ, իրաւ կան շատ սրամիտ ասացածներ, որոնք մի և նոյն ժամանակ շատ

անտեղի են. ոչ մի պրականութեան մէջ դուրս տպագրված չէր տեսնի այդ տեսակ ասացածներ մի ժողովածուի մէջ: Միթէ կարծում էք որ ամեն բան ինչ որ ժողովրդական է, կարելի է տպագրել: Այնու ամենայնիւ վերջացնում ենք խօսքը ասելով, որ ինքն աշխատանքը շատ և շատ օգտաւէտ և մեր շնորհակալութեանն ու յարգանքի արժանի է, ցոյց է տալիս կարմիր մէջ հմտութիւն հում նիւթերից օգտու ջարդելու, ցոյց է տալիս եռանդ, երկարամեայ տոկոսնութիւն, ժողովրդի կեանքի և լեզուի հետ մօտիկ ծանօթութիւն, միայն ուրիշ կողմից ցոյց է տալիս կամ իրան կազմող, կամ հրատարակիչ ընկերութեան մէջ գեղարուեստական նուրբ ճաշակի, բարոյական նուրբ գրականական զգացմունքի փոքր ինչ պակասութիւն: Բայց ի հարկէ, կեանքի մէջ ամեն բան չէ կարելի պահանջել, աշխատանքը ինքն իրան այնքան նշանաւոր ու հիմնաւոր է, որ այդ տեսակ թերութիւնները պէտք է ներել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԱՐԱՆՍԻԱ

Պրինցիբերի աքսորելու հարցի մէջ և Մադակարի ինչորում Ֆրէյսինէի կարինէի դատաւարութիւնը բաւականին մեծ յոյս էր տալիս և տարկում էր ենթադրել, որ Ֆրէյսինէի կարող կը լինի դիմանալ միջնորդական փոփոխութիւններ առաջ բերող հարուածներին և մէկը միւսի յետեւ լուծել ներկայումս Ֆրանսիայում մէկը միւսին յաջորդող ծանրակշիւ հարցերը: Սակայն վերջին օրերում պատգամաւորների այն ժողովում, որտեղ քննվում էր Գիւղարկիլլի բանաւորների գործադուլի, խառնակութիւնների և դժգոհութիւնների խնդիրը, Ֆրէյսինէի կարինէն զգաց, որ ինքը հեռու է ապահով դրութեան մէջ լինելուց, չուհեւալով ձայների հաստատ առաւելութիւն իր կողմը: Մադադակարի ինչորի մէջ գտած յաջողութիւնը յոյս տուց Ֆրէյսինէին ապագայի համար: Պրինցիբերի աքսորելու հարցի ճիւղութիւնը, որի մէջ պատգամաւորների ժողովը մեծ հաւատով վերաբերվեց զէպի միջնորդութիւնը, ոգևորեց Ֆրէյսինէին, և Ֆրանսիան կարծեց գոցել, որ Ֆրէյսինէն աւելի յաջողութիւն կը գտնի քան Վլէմանս: Սակայն բանաւորների Եւրօպայում յուզող հարցը մեծ հարուած տուց և Ֆրէյսինէի միջնորդութեանը: Պատգամաւորների ժողովը 256 ձայնների առաւելութեամբ ընդդէմ 226-ի մերժեց հերթական հարցերին անցնելու առաջարկութիւնը: Այդ առաջարկութեամբ մեծ յոյս էր յայտնվում կառավարութեանը, ենթադրելով որ նա հարկաւոր բարենորոգումներ կանէ: Այդ դեռ բաւական չէ. նոյն ժողովը 251 ձայնների առաւելութեամբ ընդդէմ 239-ի, միջև անգամ չը համաձայնեցաւ ուշադրութիւն և առնել կառավարութեան յայտնում էր, թէ չուտով կը ներկայացնէ հանձնաձեւերի օրինակներ: Այս էլ պէտք է յիշել որ այդ երկու ջրեղարկութեան ժամանակ մի ապահով կանչներ կը միանգամայն չէր զբաղ ընդհանրութեանը: Շատ պարզ է ուրեմն, որ այժմեան միջնորդական կարինէն մշտական յոյս ունենալ չէ կարող ոչ աղտոտմաների, ոչ արմատականների և ոչ էլ միապետականների վրա իսկ: Գիւղարկիլլի բանաւորների խնդիրը դեռ չէ վերջացած: Բանաւորները շարունակում են բողոքել և խառնակութիւններ յարուցանել: Եւ այդ բոլորը դժուար թէ չընտով վերջանայ, քանի որ նոյն շարժումը դեռ նոր լծողոնից անցաւ միջև անգամ միտերդամ: Անկախակալութիւնը կը տայ, քան թէ տուեց պրինցիբերի խնդրին: Եւ այդ պարզ է թէ աղաւաղման, թէ արմատական, և թէ նոյն իսկ պահանջողական կուսակցութիւնը պրինցիբերի խնդրի մէջ գտնում էր մի փառաւոր անպատկան հասարակապետութեան անուան ու պատուի համար: Այդ երեք կուսակցութիւնն էլ կամենում էին որքան կարելի է շուտ վերջ տալ թագաւորական տան ժառանգների խնդրին, ցոյց տալու համար միապետականներին, որ հասարակապետական Ֆրանսիան անտես է առնում պրինցիբերի հարցը և մինչ և անգամ հարկաւոր

էլ չի համարում նոցա համար հաստատել բացառիկ օրէնքներ: Եւ այդ բոլորի շնորհիւ փառաւոր հարուած տրուեցաւ միապետական դաշտաւորին Ֆրանսիայում: Բայց այդ խնդիր է Գիւղարկիլլի բանաւորների հարցը: Այդ դէպքը չօշափում է մի ամբողջ հասարակական կարմակերպութիւն և նորից հանդէս է բերում սօցիալական մի խնդիր: Թէ աղաւաղման և թէ արմատական կուսակցութիւնը անտարբերութեամբ չեն կարող նայել այդ խնդրին, և չեն կարող բաւականանալ հաւատարմով և յուսալով: Եւ այստեղ, որտեղ հաւատը և յոյսը դեռ չեն կարող խաղալ, Ֆրէյսինէի կարինէի ոյժը շատ կասկածելի է դառնում: Հասկանալի է ուրեմն զաղտնիքը, և պարզ է որ հաւատի և յոյսի վրա հիմնուած միջնորդութիւնը երկար կեանք ունենալ չէ կարող Ֆրանսիայում: Գոցել հանգամանքները այնպէս կը դասաւորվեն, որ այժմեան միջնորդութեան գլուխը ստիպված չի լինի հրաժարական տալ: Բայց նա պէտք է աղուտ միջոցների դիմէ իր տեղը պահպանելու համար, մանաւանդ այժմ, երբ հանդէս է գալիս Պիչոնը միապետականներին վերաբերելով իր առաջադրութեամբ, որը նորից գոցել կը յուզի պրինցիբերի խնդիրը, և ունի իր կողմը բաւականին ձայներ:

ՆԱԽԱՅԻՑ ՖԱՐԱՆՍԻԱՅԻՑ

Փարիզ, 7 մարտի 1886

Գիտութեանց ձեռնարանի մարտի 1-ի նստի մէջ, Պատեօրը համոզել և ծանրակշիւ ապացոյցներով պարզեց կատարած (la rage) կենդանիներից զննարկներին բժշկելու իր մեթոդի զուգացուցիչ միջոցները (prophylaxie). Գիտ. 1882 թվից այս մեծ դիմանակների բոլոր շնորհքը դարձած են այս բանի վրա: Կատարած շնորհ կիւնը, որին անխառնակի կերպով հետեւում է կատարելութիւն և մաս, այսօր դարձել է շատ անհաճոյ երեւոյթներից միւրը, որոնցով լինել է մեր կեանքը... Ինչպէս ինքը Պատեօրը ասեց բժշկական ձեռնարանի 1885 թվի հոկտեմբերի 26-ի նիստում, այդ մեթոդի մէջ թագաւորում է երկու գլխաւոր կէտ. ա) բուռն գործնական, այն է,—ունենալ ձեռքի տակ, ամենայն ժամանակ, մաքուր և միատեսակ թոյնի (зарез) բուսարար քանակութիւն. բ) ունենալ թունաւորութեան դանաղան աստիճաններից ստացած պատուաստելու թոյն, որով պատուաստելուց առաջ է գալիս կատարելութիւնը եօթ օրից յետոյ, առանց որ և է զգալի հետեւանքների միջև թուրաւորվելու: Առաջին կէտին համեմու համար, նա ունի իր ձեռքի տակ բազմաթիւ ձագարներ, որոնք թունաւորուած են յայտնի ժամանակում յայտնի թոյնով: Երկրորդ կէտին նա համարում է, զննելով չոր օդ պարունակող սրտակներում (содержа), փոքր ջրմուկեան ներկայութեամբ, ձագարի մէջ թէ ուղեղի փոքրիկ կտորիկ, որը ստտիկ է կատարելութեանը: Որքան երկար է մնում ուղեղի կտորը սրտակի մէջ, այնքան էլ քիչ է նրա թունաւորիչ ոյժը: Այդպիսով Պատեօրին յաջողվեցաւ, այսպէս ասել, շանը դարձնել կատարելութիւնից չը վարակիղ (refractaire), պատուաստելով նրան կատարելութեան թոյնը, սկսելով համարեալ ոյժ չուհեցող թոյնից և վերջացնելով ամենաուժեղ թոյնով: Երկու տարի սրանից առաջ նա ունէր յիսուն այդպիսի շուն: Հետեւանքները շատ նշանաւոր էին, բայց լուսաւոր աշխարհը անհամար սպասում էր աւելի նշանաւոր հետեւանքների: Եւ նրա սպասելիքները իրաւորվեցան: Այն ժամանակ եկան Պատեօրի մօտ երեք աղաւաղեղ, մէկը Թեոդորա Վան անունով, միւսը Յովսէփ Մէյսաւեր, և երրորդը՝ վերջինիս մայրը: Պատեօրը դանակով առաջինին միանգամայն անվտանգ, մի և նոյն օրը նրան յետ ուղարկեց: Երկրորդը ունէր 14 վերջ իր մարմնի վրա, որոնք առաջ էին եկել կատարելութիւնից սաստկած շան կծկուց (շան ստտիկը հաստատված էր տեղական իշխանութիւնների տեղեկութիւններով և զննուցումներով): Յուլիսի 6-ին, կծկուց 60 ժամ յետոյ (յուլիսի 4-ին), Պատեօրը, բժշկական ֆալսիֆիկատի պրօֆէսոր—բժշկների՝ Վիւլպիանի և Գրանշէի ներկայութեամբ, առաջին անգամ պատուաստեց փոքրիկ Մէյսաւերին, (որը 9 տարեկան էր), յուլիսի 7-ին, առաւօտեան, երկրորդ անգամ պատուաստեց, երրորդ անգամ պատուաստեց նոյն օրը երեկոյեան. 8-ին պատուաստեց նոյնպէս երկու անգամ, և ապա միջև ամսի 16-ը պատուաստեց իւրաքանչիւր օր մի մի անգամ: Անցաւ և երեք և

տ ա-
ուրի
ապ-
ալ
Այդ
ական
մ ս-
ար-
եանք
ը բա-
տակ,
խա-
ածելի
ընդ,
և
ուած
կա-
այն-
որու-
ական
դիմէ
այժմ,
երկին
որից
ի իր

կ է ս ամիս (1885 թվի, նոյեմբերի 26-ի զեկու-
ցումը) և Մէյստերը կենդանի էր և աղոտ վտան-
գից: Այդ զեկուցումից, և զեկուցումի մարդը աշ-
խարհում ունեցած արժանաւորից յետոյ, Պատե-
րի մօտ խմբուում են ամենայն կողմերից կատա-
ղած կենդանիներից շնորհակալները՝ պահանջելով
ընկերակցութիւն: 1885 թվի փետրուարի 25-ին Պատ-
եորը պատուաւան 350 հիւանդներին: Բոլոր այդ
350 հիւանդները գտնուում են անվտանգ դրու-
թեան մէջ: Պատեորը իր մարտի մէկի զեկուցու-
մով բաժանում է նրանց երեք խմբի, իւրաքանչիւ-
րի մէջ 100 մարդ: Առաջին խմբի 100-ը շնա-
ված է զեկուցումների 15-ին, ամենից 21/2 ամիս սրա-
նից առաջ, երկրորդ խմբի 100-ը վեց շաբաթից
մինչև 2 ամիս առաջ: Իսկ միջնակարգութիւնը
ցուց է տալիս, որ կատարուելիւնը երկուս է կծե-
լուց 40—60 օր անցնելուց յետոյ: Հետևաբար, ա-
ռաջին երկու խմբերի 200 մարդիկը գտնուում
են միանգամայն անվտանգ դրութեան մէջ: Իսկ
ինչ վերաբերում է մնացած 150 մարդուց, —
նկատի առնելով նրանց դրութիւնը, որը համա-
պատասխան է ամենայն կողմից առաջին 200 մար-
դոց — հիւանդութեան մի և նոյն ժամանակակիցու-
թիւնը, — կարելի է դրականապէս ասել, որ նրանք
բոլորը են անվտանգ դրութեան մէջ են: Պատ-
եորը եղբակցիւնում է, — կատարուելիւնը դէմ
զգուշացուցիչ միջոցները (la prophylaxie) հաս-
տատուած են, և միտք է յայտնում կատարուած
նրերից շնորհակալների համար յատուկ հիւանդա-
նոց հիմնելու անհրաժեշտութեան մասին:

Գիտնական ժողովը վարձատրեց իր ամենանշա-
նաւոր անդամին ծախսարութիւններով: Բնդա-
նոր յուզման ժամանակ, ճեմարանի նախագահը
դարձաւ Պատե օրիւն և արտայայտեց նրան
իր աւագի հպարտութիւնն աշխատանքի զգաց-
մունքը, որով ողորկուած է ամբողջ ճեմարանը
նրա ջանքերով: Նրանից յետոյ նշանաւոր հեղինա-
կութիւն ունեցող Վիլիսիանը, նորից հաստատում
է, որ այն 350 մարդիկը այնպիսի դրութեան մէջ
էին, որ անպատճառ կը մեռնէին, եթէ Պատ-
եորը չը լինէր, և շարունակում է պնդել նոր
հիւանդանոցի անհրաժեշտութիւնը, ի միջի այլոց
է այն պատճառով, որ կարելի լինի ազատել
Պատեորին այն հոգսերից, որոնց նա ենթարկ-
վում է, հիւանդների համար կահավորւած սենե-
ակներ, հոգատար կանայք և այլ այդպիսի պի-
տոյքներ հոգսիւն: Պատեորը ավելացրեց, — ու-
շաբաթական առնելով այն բանը, որ պատուա-
տել կարելի է գործադրել յաջողութեամբ կծե-
լուց մի քանի շաբաթ յետոյ ևս, (բժշկական են 4
ամբերկացիք, որոնց նպատակաւանքին կծեց 24
օր յետոյ), ուստի կարելի է հիմնել մի ընդհանուր
հիւանդանոց ֆարդում՝ բոլոր Եւրոպայի և հիւ-
սիսային Ամերիկայի համար: Նրա հաշուեկոյրը
(այս ասի մասին արել է կարեւոր հաշիւները) այդ-
պիսի հիմնարկութեան տարեկան ծախսը 50.000
ֆրանկից ավելի չի լինի և հիմքը կարելի է դնել
միջազգային հանգանակութեամբ: Այդ վերջին
մտքի առիթով նախագահը պատասխանեց, որ
Ֆրանսիան բաւական հարուստ է իր փառքը վճա-
րելու համար (La France est assez riche pour
payer sa gloire):

Առաջարկվեցաւ ընտրել յանձնաժողով այդ
մտքի իրագործման համար: Յանձնաժողովը ընտր-
վեցաւ Միլիտարներ խորհրդի նախագահ և
արտաքին գործոց մինիստր Պրէյսիէին ընտրված
է անգամ յանձնաժողովի: Նա յայտնեց, որ կա-
ռավարութիւնը բաղադրու է լինի մասնակից լի-
նելով Պատեորի հակապական ձեռնարկութեանը:
Այդ յայտնութիւնը ընդունվեցաւ ընդհանուր հա-
ւանութեամբ:

Մի և նոյն օրը երեկոյեան, յայտնի գրող և
հրապարակախօս, «Comédie Française»-ի վերա-
տեսուչ և Կրթականագէտների ընկերութեան» նա-
խագահ, Ժիւլ Կլարտի, ճաշկերոյթ տուեց իր
ընկերակիցներին: — Հրապարակ լուսնաւոր ան-
ձանց մէջ էին Պատեորը և ժողովրդական լու-
սաւորութեան մինիստր Գուլէ, և որիչ շատ ար-
կանաւոր անձինք: Զաշկերոյթի վերջում, Ժիւլ
Կլարտի մի ճարտարահիւս և շատ սրամիտ ճառով
Պատեորի անուամբ միջնակարգ հիմնելու միտքը
յայտնեց, որի արդիւնքը գործադրվէր նպատե-
լու արժանաւոր և օգտակար, բայց անպատճառ
զինակալներին: Այդ ճառը ընդունվեցաւ բերե-
լութեամբ: Միևնաբար սեղմեց նրա ձեռքը խոր-
հրդատու կերպով, — որ կը նշանակէ թէ կառավա-
րութեան կողմից ոչինչ արդեւ չը կայ: Գրանից
յետոյ, օրուայ հերոսը՝ Պատեորը կատմեց ու-
րախ խմբին զանազան բաներ իր պարապմունքնե-
րի մասին, և ի միջի այլոց հաղորդեց Սմիլին

յայտնելով վաճառարեւոյն, ասաց, որ իր ունե-
ցած յաջողութիւններով ինքը միանգամայն պար-
տական է բոլոր ժողովրդեան հաղթանակութեան
թիւնը և զօրքի քաջութեանը: Այդ խօսքերը ժո-
ղովրդեան մէջ բերկրութեան բուռն ցոյցեր առաջ
բերեցին:

— Լեհական լրագրիներում տպւած է Նիւ-Եօրկի
լեհական բարեգործական ընկերութեան հրաւերը:
Ընկերութիւնը այդ հրաւերով առաջարկում է
Պրուսիայից արտաքսվող լեհերին դադարել Ամերիկա,
և խոստանում է դրամական մեծ օգնութիւն:

— Վերջին օրերում Ալէքսանդր Կոլոմբով
ընդունելով իր յոռական կառավարութիւնը մտա-
դիւ է ենթարկվել Եւրոպայի կամքին և դադարե-
ցնել պատերազմական ցոյցերը, մեծ յուզմունք ա-
ռաջ բերին ժողովրդեան մէջ: Կառավարութեան
այդպիսի մտադրութիւնից զգուշանալով մի քանի
ցոյցեր արեցին:

— Փետրուարի 12-ին, պրուսական պատգամա-
ւորները պալատը զննութեան ենթարկեց լեհացի-
ներին գերմանացիներու օրինադիմ: Առաջին օրե-
նադիմ համաձայն, լեհ-կառավարութեան հողերը
պիտի անցնեն գերմանացիներին: Նրկորդ օրինա-
դիմ համաձայն լեհական լեզուին պիտի փոխա-
րինէ գերմաներէնը, և ուսումնարանների ուսու-
ցիչները և ուսուցչուհիները նշանակելը կախված
պիտի լինի տեղական իշխանութիւնից: Կառավա-
րութեան օրինադիմը պաշտպանում էր լուսաւո-
րութեան նախարարը: Գառաջարկմանները
ժող. աշխույժ էին նայում այդ օրինադիմ: Վրա: Հա-
ւանական է, որ օրինադիմը տրուի յանձնաժողովի
քննութեամբ:

— Ընդհանրեց մարտի 10-ից հաղորդում են որ
համայնքների ժողովը 241 ձայնով ընդգէմ 229-ի
չընդունեց Գրիվինի առաջարկութիւնը՝ բաժանե-
լու եկեղեցիին պետութիւնից:

— Բերլինից մարտի 10-ից գրում են, որ Բէյ-
խատաղը սկսեց Վիլհելմի արտաքարկութեան
քննութիւնը, որով նա առաջարկում է ազատել
պատգամաւորներին պարտաւորեցուցիչ երդումից:
— Ծառայողական գործերի նախարար պ. Տրէ-
վելին համաձայնեց ժողովին ներկայացրեց մի
օրինադիմ, որը վերաբերում է Ծառայողային երկ-
րագործների դրութեան բարելոքման: Գայտի է,
որ վերջին տարիները Ծառայողային կառավարու-
թեանը իւրեք իւրանց բոլոր հողերի մեծ մասը
մնաց երկրագործներից, ցանկանալով՝ այդպիսով
պահպանել այդ հողերի վրա գտնվող անտառնե-
րը, որոնց միջի որսի կենդանիները մեծ օգուտ-
ներ են խոտանում: Այդ բանի պատճառով երկ-
րագործները ընկան աղքատութեան մէջ, և դո-
րանց թշնամութիւնը դէպի կառավարութեանը
վերջին ժամանակները այնպիսի սուր կերպարանք
ստացաւ, որ կառավարութիւնը վճռեց կադմի-
մի յանձնաժողով այդ խնդիրը ուսումնասիրելու
համար: Այս հէնց այդ յանձնաժողովի աշխա-
տութիւններից օգուտ քաղելով, պ. Տրէվելին
իր ծրագրի կառավարութեան ժամանակ, որը վերա-
բերում է հողային բարեկարգումներին, և որը
միանգամայն ձեռք արտայայտութիւն է ժողո-
վրդեան անհամաձայն մեծամասնութեան ցանկու-
թիւնների: Նոյնը իսկ և իսկ միանալութեան ունի
իրանդական հողային հարցի հետ: Նոր օրէնքի հի-
ման վրա, երկրագործները կունենան հաստատ
պայմաններ, կը տան օրէնքով որոշված հողային
վճարը միայն և կառավարութիւնը կամայականու-
թեանը օրէնքով ենթարկվում է տուգանքի յօդուտ
երկրագործի: Տրէվելինի նախագիծը մի նոր
քայլ է պետական սօցիալականութեան ճանա-
պարհի վրա: Տեսնենք ինչպէս կը վերաբերվին
պահպանողականները դէպի այդ նախագիծը:

— Վերջինից հեռագրում են, որ փետրուարի
26-ին մեռաւ մի բանուր խօսքի մէջ:

— Խառնալի Նեպոլի քաղաքից գրում են մար-
տի 5-ից: Այսօր, կէսօրից յետոյ, երկաթուղու
կայարանը և գնացքը սրաշտպանում էին
զօրքից և ոստիկանութիւնից: Նրկուղ էին կը-
րում ընդհանուր գործադուլից, ուստի և դիմացին
այդպիսի կարական միջոցի:

— Վիեննայից գրում են մարտի 6-ից, որ առա-
ջիկա շաբաթ կը կայանայ դեպքաւորութիւնը:

— Նորբերում Սալիսբերիին իր մի ճառի մէջ,
խօսելով իրանդական հարցի մասին, ասաց, որ
Գլաուստըրը փոխում է իր քաղաքականութիւնը
այնպէս, ինչպէս փոխում են ձեռնոցները: Սալիս-
բերին չէ կարողանում սառն կերպով նայել Ղը-
լաւաթոմբի բռնած վճռական դիմքին: Սալիսբե-
րին լուր է տարածում, որ պահպանողական կա-
րկնեւոր պատրաստել էր մի առաջարկութիւն իր-

լանդական բարեկարգումներին համար, և որը պի-
տի ներկայացվել պարլամենտին:

— Ընդհանրեց գրում են «Indépendance Belge»
լրագրին, որ արեւմտեան իրանդական սովը օրե-
ցօր սաստկանում է: Նրեք մարդ արդէն սովամահ
են եղել: Իրանդական բարեկարգումներ խն-
դիր մահու և կեանքի խնդիր է դարձել ժողովր-
դեան համար:

Դատ տարիներ առաջ, երբ դեռ Գանձակում
նստում էր պարսից խանը, Գանձակի շրջակայ-
քում գտնվող Ա. Գիւղը ապրում էր իր սովորա-
կան աղքատ, միատեսակ կեանքով: Եթէ պատա-
հում էր, որ այդ միատեսակութիւնը խանգար-
վում էր, դրա պատճառը միշտ լինում էին խանի
ասպատակող ծառաները...: Բայց դարեւան մի գե-
ղեցիկ օր Ա. Գիւղում մի բան պատահեց, և նրկի-
դարձաւ գիւղացիների խօսակցութեան և զանա-
զան տարակուսանքների: Պատճառը այդ բանի
մասին խօսելիս մինչև անգամ երեսները խաչա-
կնքում էին...: Գիւղի այդ տարօրինակ անհան-
գստութեան պատճառը Մահաբի Գրիգորի որդի
Յակովբի կինն էր, Մարիամը: Մարիամը տնայրար
կին էր և ծանր բնաւորութեան տէր, այդ պատ-
ճառով նրան յարգում էին: Իսկ նրա սկեսուրը՝
Նազուկն անհիմն եկեղեցուց դալիս միշտ իր հարսի
մասին կը խօսէր: Այսովոր խօսակցութիւնների
պատճառը մի պատահանք էր: Մի օր Մարիամը
գնաց կովերը կիծելու: Խառնար կովը ըստ սովո-
րութեան չարութիւններ էր անում: Քարսի պէս
այդ օրը Մարիամի սկսեց շատ նեղ էր, որովհե-
տե իր Ոսկի աղջկան տարել էր «Քամու խաչը» և
փոխանակ լաւանալու, վատանում էր օրից օր, և
այսօր շատ պոկ էր, որ տան բաները վերջացին,
և դնա Հեղինար-բաջու մօտ և Կիւղը չարիչ տա-
լու: — Սակայն խառնարը այդ էր հասկանում, և այն-
քան ունեւորվ քաջի-քաջի արեւ, որ խից և բու-
լոր կաթը թափեց...: Մարիամը կատարեց...: Գ
գիծ խառնարի ոտից բռնելով բարձրացրեց և դէն-
չարեց...: Տեսնողները աղէկան: Կովածի արա-
գութեամբ Մարիամի քաջութեան լուրը տարած-
վեցաւ գիւղում և մինչդեռ գիւղում Մարիամին
կախարդված, տառամայից խիւղած, սրբացած
էին համարում, լուրը գիւղից գիւղ անցաւ հասա-
հանակ, և մինչև անգամ խանի տկանջին...:
Խանը կամեցաւ տեսնել հերոսուհուն: — Մահաբի
Գրիգորի տանը սուգ էր թաղաւորում: Պատուա-
ւոր կնոջ համար մահ էր դուրս գալ պարսիկ խա-
նի երեսը...: Խանի հրամանը յաղթեց — և Մարի-
ամը գնաց Գանձակ: Գանձակ գնաց և այս բոլոր
պատահարներից վերաշուշաւ Յակովբը: — Պարսիկ
բռնաւորը տեսաւ հայ հերոսուհուն, դարմանը
յայտնեց և հրամայեց իր առաջին գոտեմարտին
հայ-կնոջ հետ գոտեմարտելու հրապարակաւ, բաղ-
մութեան առաջ: — Խանը հրամայեց իր հպատակ
Մարիամին հնազանդելու իր կարգադրութեանը:
Միւս օրը հրապարակը լքեցաւ էր ամեն կողմից
հաւաքուած պարսիկ և հայ բաղադրութեանը: Հրա-
պարակի մէջտեղը պարսիկ դուռը գոտեմարտը
պատրաստ կանգնած էր: Եկաւ խանը իր մարդ-
կերանցով: Հրապարակ դուրս եկաւ Մարիամը:
Պարսիկ ըմբիւր արամարահանքով նայում էր Կեր-
կայանածամ կնոջ վրա...: Մարիամը սառնու-
թեամբ մօտեցաւ, նայեց պարսիկ վրա, և հէնց
որ ձեռքը դրեց նրա ուսին և սեղմեց,
ըմբիւր ծնկները ջուր կտրեցին...: Գոռող պարսիկը
խոտովանեց իր յաղթվելը: Ամբոխի բերանը բաց
մնաց: Յակովբը հաղիւ ձեռքից չը գնաց: Մա-
րիամը ստացաւ խանի շնորհակալութիւնը և դար-
ձաւ տուն...: Ա. Գիւղը ջահիլ հարսները ջրի գնա-
լիս Մարիամի մասին դանազան պատմութիւններ
էին անում: — Խախտուած էր Մահաբի Գրիգորի
տան հանգստութիւնը: Մարիամը սկսեց իր սո-
վորական կեանքը: Սակայն այս օրից սկսած տա-
նեցիք, մանաւանդ Յակովբը փախչում էին նրա-
նից: Այդ նկատում էր Մարիամը և ողբում էր...:
Հերոսուհին չը համբերեց, ողբաց իր դրութիւնը
պառաւ ոսկուտի առաջ: Նաղուկ նանին մօտեցաւ
իր սիրելի հարսին նրկից: Մի օր Մարիամը
ուսաց ոսկուտի, Կրանից յետոյ ես գիտութեամբ
յիմարութիւններ կանւում, ամաններ կը կտորեմ,
ջուր կը թափեմ, կերակուրը վատ կը պատրաս-
տեմ, ամենքը ինձ ծեծեցէք այդ բաների համար:
հայհոյեցէք, որ դրանից սիրտ առնի մարդա...:
Գրանից յետոյ վախեցած և վերաշուշաւ Յակովբը

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Անդրապոյս իրանդական խնդիրը շարունա-
կում է, զգաւորները ամենքին: Ամենքը պատում են
Գլաուստոնի կազմած նախագիծին, որով առաջին
մինիստրը կամենում է լուծել իրանդական հարցը,
բաւականութիւն տալով իրանդացիների արդարա-
ցի պահանջներին: Նախագիծի հիմքը իրանդական
ինքնավարութիւնն է: Պահպանողականները աշ-
խատում են օր առաջ իմանալ Գլաուստոնի
ցանկութիւններ մանրամասնութիւնները, որպէս
զի կարողանան խառնարութիւններ առաջ բերել
իրանդական հարցի թշնամիների մէջ: Սակայն
Գլաուստոնը միշտ անորոշ բաղադրութիւններ և
պատասխանների է տալիս պահպանողական կու-
սակցութեան հարցերին: — Եւրոպ. Չերչիլը շարու-
նակում է իր հակա-իրանդական պրօպագանդան:
Մարտի 3-ին Մանչեստերում մի ճառ խօսելով
պահպանողականների ժողովի մէջ, Եւրոպ. Չերչիլը
առաջարկեց մի դաշնակցութիւն կազմել տօրինե-
րից, վիդերից և ազատամիտներից, որի նպա-
տակը լինի խանգարել իրանդական հարցի յաջը-
լուծմանը: Այդպիսով Սալիսբերիի կարեւոր խո-
րամանկ անդամը վտրձում է ամենայն տեսակի մի-
ջոցների դիմել: Իսկ Գուլիլից հաղորդում են, որ
Իրանդիստան տեղի ունեցան սպանութիւններ
հողի հարցի պատճառով:

— Սօֆիայից փետրուարի 20-ից (մարտի 4-ից)
հեռագրում են «Pol. Cor.» լրագրին: Այսօր հան-
դիսից յետոյ իշխանը յայտնեց զօրքին, որ խաղա-
ղութիւնը արդէն կապված է Յօդովուրդը զօրքի
հետ միասին ուրախութեան աղաղակներով ընդու-
նեց այս լուրը: Քաղաքը ի պատիւ իշխանի հան-
դիսատու ցոյցեր արեց: Նրը իշխանը դուրս եկաւ
պատուաւոր, վաճառապետը դիմում էր նրան մի ճա-
ռով, որի մէջ յիշեց իշխանի արած ծառայութիւն-
ները Բուլգարիային և ժողովրդեան կողմից շնորհա-
կարութիւն յայտնեց: Իշխանը շնորհակալութիւն

